

Լճնայրն. ՆՐԴ. Հին Հայոց Տեղոյ Անուններ, Թրգ. 2. Բ. Պիլեզիկճեան, Տպ. Վիեննա 1907, էջ 153, մենթ. 4.) և Սրմանեան Սրբապան՝ իր Ազգապատմին մէջ (էջ 1344):

Անոնք որ կը հասկընան պատմական հետազոտութեան և քննադատութեան նշանակութիւնը, անոնք որ ճշմարտութիւնը կը փնտռեն ունէ նիւթի չուրջ, պէտք է ընդունին առանց այլեայլի թէ մեզ—Դղեակը Անտիոքի Տրոփ գաւառին մէջն է, և ո՛չ թէ ուրիշ տեղ մը:

ԲԱՐԿԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍԻՌՆԻ ԼՈՒՍԱՔԱՆՈՒՔԻՆՆԵՐԸ

— Կը հարցնեն մեզ թէ ի՞նչ կայ ունի Կարդիկոս բառը Բարոյի՞ բառին հետ: Շնորհիւ է Ժամանակ օրաթերթի մէջ (1927 Նոյմ. 19. Եր.) Յատր Գրիգորի (Մազիսարոս) գրածը թէ «Կաթողիկոս»ը ազգի և օտար բառ մըն է որ օտարներուն կարծիքով առած է և կուտայ թէ մեր վեհ. Հայրապետը «Կաթողիկոս» կոչուելով, Ս. Պապին ենթադրեց է:

Կարողիկոս և կարողիկի յունարէն բառ մըն է, Բարոյի՞մս, Բարոյի՞ք, որ բարդուած է Բարա՛ (պիս, բառ) մակրային և օ՛րոս (հաւնութ, արողջ, ամենայն) ածականէն, և կը նշանակէ ընդհանրական:

Կարողիկի բառը նիկիական հանգանակով նուիրագործուած է իրբն ստորագրելի քրիստոնէական եկեղեցւոյն. «Հաւատամք և ի մի միայն ընդհանրական» (= Կարողիկի) եկեղեցին: Այսինքն, առանց յարանուանութեան, Յիսուս Քրիստոսի մի եկեղեցին, որ ընդհանրական է և կը պատկանի բոլոր ազգերու հաւատացեալներու ամբողջութեան, այսինքն՝ չի պատկանիր միայն հայուն կամ հոռոմին կամ լատինին՝ զատ զատ: Եւ իրօք այսպիսի ազգայնական և յարանուանական առանձին բմբռնումներ և հասկըցողութիւններ չկային քրիստոնէական աշխարհի մէջ, Քաղկեդոնի ժողովէն (451) յառաջ, և եկեղեցի բառած առնելը կը հասկըցուէր Քրիստոսի՛ եկեղեցին, որ մեկ է, ընդհանրական (կաթողիկէ) է, առաքելական է և սուրբ է:

Արդ, այս կարողիկի կամ կարողիկեայ

բառն է որ իր բուն իմաստն և պատմական նշանակութենէն շեղեցնելով, յարանուանական անձուկ առուծով մը, լատին եկեղեցին ուղած է իրեն սեփականել. այնպէս որ կարողիկի = Բարոյի՞ք կամ լատին ձեռով Բարոյի՞քս կամ Բարոյի՞ք բառած առնելը այլեւս կը հասկըցուի Հոռոմի եկեղեցին ներկայացնող յարանուանութիւնը, և մեր մէջ ալ՝ կարողիկի հայք կամ հայ Բարոյի՞ք հաւատածը, որ յարած և հպատակած է Հոռոմի արժողութիւն:

Սաղանթեանց իր Կոնստանտինոպոլիս մէջ (տպ. Մոսկով, 1831, էջ 88-89) Կարողիկի բառը ստուգարանելէ ետքը սա ուղադրուող լատիներէն կ'ընէ. — «Ուստի սխալին այն բառադիրք, որ կամ թանձր տգիտութեամբ, կամ նենգաւոր խաբէութեամբ զրառող, Բարոյի՞ք Բարոյի՞քս, և այլն, մեկնարանեն, ուղղափառ, ուղղափառութիւն, ուղիղ հաւատք, դաւանութիւն, և այլն. զի զայդ իմաստ ո՛չ երբեք տայ՝ ո՛չ կաղմութիւն և ո՛չ նշանակութիւն կամ զործածութիւն յոյն բառին, ըստ որում ուղղափառն առ նոսա ասի օրթօօփօս: Վասն այսորիկ ազաւեմք զհայազգի եղբարս մեր, զի քաջ ուսցին և իրերայ ուսուցեն զայս ուղիղ նշանակութիւն և զտարբերութիւն բառիցդ, որպէս զի կարասցեն ազատիլ յորդայնից բաժանեալ հայոց մերոց, որք զինքեանս՝ առանց ամենայն փաստից՝ Բարոյիկի կոչելով, և Բարոյիկ անուամբ՝ զուղղափառն իմանալով և մեկնելով, հրապուռն զպարզամիտ և զանուսումն ժողովուրդս մեր ի թողուլ զեկեղեցիս հայոց և ի յարել ի լատինս. որոց եկեղեցի և հաւատք՝ ո՛չ է և ո՛չ կարէ կոչիլ Բարոյիկ. ըստ որում ազգացուցեալ եմք ի ձերոց Հասարակ զիրան մեր»:

Գալով կարողիկոս բառին, շատ հին է ատոր զործածութիւնն ալ Հայոց մէջ, Բաղնայրայեցի և Եպիսկոպոսայեցի իմաստով, նոյնպէս Վրաց և Աղուանից եկեղեցեաց մէջ:

Ասորի եկեղեցւոյն ալ հովուապետը կը կոչուի Կարուլիկո (cathoulico). այնպէս որ բառը թէն օտար, բայց ուրիշ շատ մը բառերու պէս, հայացած է բոլորովին և նուիրագործուած է Հայ պատմութեան և Հայց. եկեղեցւոյ մէջ. հետեալաբար ներկի

չէ զայն «օտար և տղեզ» նկատել. որովհետեւ Լուսաւորչէն սկսեալ իր բոլոր սերունդին եպիսկոպոսապետները մինչև Ս. Սահակ, Կարողիկոս անունը փառաւորած են, առոր տաղով որբազան պաշտօնին բարձր խմաստը, նուիրական ըմբռնումը և արմանիքի ու գիրքի վսեմ հասկըցնողութիւնը:

Դարձեալ Կարողիկէ բառը, շատ սեղմ ու յստակ առումով մը, օտարոգելին եղած է էջմիածնի Մայր Եկեղեցւոյն, և անելի սեղմ նշանակութեամբ մըն ալ, հայ ճարտարապետութեան մէջ, կը ներկայացնէ Հայաստանի եկեղեցիներուն սիրուն և գեղեցիկ գմբէթները: Այս հակիրճ դիտողութիւնները ցոյց կուտան թէ Կարողիկոս, կարողիկէ հայեցի են և սերտ կապ ունին մեր ազգային և եկեղեցական պատմութեան հետ, և կարելի չէ մէկգի նեաւել զայն իր բնական օտար և տղեզ (անհասկնալի՝ որակում մը) այն օտարներու սիրուն, որոնք իրենց խօսածներուն և գրածներուն մէջ հաշուադէպ է որ շիտակ տեղեկութիւն մը արձանագրեն Հայաստանի Եկեղեցւոյ մասին. զոր օրինակ չես կրնար օտարներուն գլուխը մտցնել թէ Հայաստանեայց Եկեղեցին նշանակալի կամ միաբնակ չէ. չես կրնար հասկըցնել անոնց թէ Հայոց մայրենի եկեղեցւոյն անունն է Հայաստանեայց Եկեղեցի կամ Եկեղեցի Հայոց, և ո՛չ թէ Լուսաւորչեան կամ Գրիգորեան: Նոյն իսկ հայ-կաթօլիկներուն, որոնք «էջմիածնական» ստորապելի մը յերկրեցին իրենց Մայրենի-Եկեղեցւոյն համար, չես կրնար հասկըցնել թէ պատմական ու աններելի սխալ մը ըրած են: Եթէ օտարները այնքան անպատրաստ են Հայոց և Հայաստանեայց Եկեղեցւոյ մասին շիտակ բաներ հասկընալու և գրելու, այն ատեն բոլորովին միամտութիւն է կարծել թէ զարերէ ի վեր նուիրապետութեամբ և ամբողջ Հայ մատենագրութեան մէջ պատմականացած և օտար մատենագրութեան մէջ ալ ծանօթ Կարողիկոս տիտղոսը եթէ չգործածուի, օտարը պիտի փոխէ իր կարծիքը. թէ, ըստ մեզ, ունէ արժէք չունի կարծիքը ա՛յնպիսի օտարներուն, որ չեն գիտեր Կարողիկոս բառին նշանակութիւնը Հայոց, Վրաց, Աղուանից և Ասորաց եկեղեցիներուն մէջ և կը

չիտթեն զայն «Կարողիկէ» բառին բառին նայած յարանուանական առումին հետ:

Իրեն հետաքրքրական ծանօթութիւն գիտել կուտանք նաեւ թէ Կարողիկոս բառը իր նախնական առումով Հոռմէական կայսրութեան մէջ հարկահանութեան բարձր պաշտօնեայի տիտղոսն էր:

Եւ որովհետեւ Հայց. Եկեղեցւոյն հոգեւոր վերին պետերը (ինչպէս յայտնի է Եգիւղէն և Թորենացիէն) պետական հարկերու գանձումին վրայ ալ կը հսկէին^(*), հաւանական կը թուի մեզ թէ Հայոց հայրապետները այդ պատճառով կոչուեցան ԿԱԹՈՂՈՒԿՈՍ: Բայց երբ այդ աշխարհիկ պատականութիւնը զաղրեցաւ, առոր տիտղոսը մնաց սակայն: Մեր հնագոյն պատմագիրներէն Փաւստոս ունի Կարողիկոս կոչումը, ունի նաեւ առոր հետ Քանանայացեալ, Եսիսկոպոսացեալ և Հայրապէս կոչումները. և Փաւստոսի, ինչպէս նաեւ Աղաթանգեղոսի մէջ՝ Բարսեղ Կեսարացին ալ Կարողիկոս կոչուած է:

Բ. Ե.

ԿԱԹՈՂՈՒԿՈՍ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ

և

ԿԱԹՈՂՈՒԿՈՍ

և

Տաթևացին կ'ըսէ.

— «Այլ գիտելի է զի Քրիստոս զո՛ւի է եկեղեցւոյ, եւ հաւատացեալը՝ մարմին եւ անդամը նորա»:

— «Մի է Քրիստոս եւ մի մարմին նորա, որ կոչի մի Կարողիկէ եկեղեցի»:

— «Կարողիկէն ընդմանրական լսի, իսկ եկեղեցին՝ ժողովումն»:

— «Մի է ամենայն ընդմանուր եկեղեցիք, որ է բոլոր Քրիստոնեայր ըստ հաւատոյն եւ կոչմանն յոսոյն որպէս սնո իւ»:

— «Դուիս եկեղեցւոյ է՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որպէս ասացաւ, եւ փոխանորդ նորա ի յերկրի ի հինն բանաւայապետն, որպէս Անարսն, եւ ի նորս Կարողիկոսն իւրաքանչիւր ազգի»:

(Գիրք-Հաղցմանց, էջ 532-534)

(*) Տե՛ս ՍՄՈՒՆ, 1928, Թիւ II, 854ր. էջ 7-8: